

Մամլոյ Հաղորդագրութիւն Նահատակներուն Տօնին առթիւ

Մայիս վեց 1916-ին, Սուրիոյ ազատագրումի հերոսները մարմնացուցին ազգային հարսնիք երբ կանգնեցան հպարտութեամբ կախադաններուն տախտակներուն վրայ, որոնք կանգնեցուց իրենց համար մարդասպան Ճամալ Բաշան, մարմնացնելով քաջութեամբ ազատագրումի և արժանապատուութեան ոգին Սուրիացիներուն մօտ:

Եւ ահա, կը ժամանէ Նահատակներու Տօնը այս տարի և Սուրիան կ'ապրի իշխանութեան բռնապետութեան և իր ռազմական ապահովական լուծումներուն դժոխքին մէջ մէկ կողմէն, և ահաբեկչական քաւչական խմբակցութիւններուն խաւարին մէջ միւս կողմէն:

Ազգային Համակարգող Մարմինը ողջունելով Մայիս 6-ի հերոս նահատակներուն յիշատակը, կը կանգնի պատկառանքով և վեհափառութեամբ Սուրիոյ վսեմ ապստամբութեան բոլոր նահատակներուն դէմ, որ սկսաւ 18 Մարտ 2011-ին: Անոնք նուիրեցին իրենց գեղաբոյր արիւնը ազատութեան և արժանապատուութեան փրկանքին, որուն համար պայքարեցան տասնամեակներ Սուրիոյ ժողովուրդը: Համակարգող Մրմինը կը վերահաստատէ նաև իր վճռականութիւնը սպառելու բոլոր կարողութիւնները միացնելու ազգային ջանքերը փրկելու համար Սուրիան իր այժմու աղէտէն, և իրագործել տենչուած ազգային ժողովրդավարական արմատական համապարփակ փոփոխութիւնը:

Ողորմութիւն ու անմահութիւն Մայիս վեցի նահատակներուն և Սուրիոյ բոլոր քաղաքացի ու զինուորական նահատակներուն, ապագիւնում վիրաւորներուն և ազատութիւն կալանաւորներուն ու առեւանգուողներուն:

Ազգային Համակարգող Մարմին – Տեղեկատուական գրասենեակ / 6 Մայիս 2014